Հայտարարություն

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Ֆինանսական կառավարման և հաշվառման վարչության փորձագետ ներգրավելու համար

ք. Երևան **20 հունվարի 2026թ.**

Ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը՝

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում կառուցվածքային փոփոխությունների իրականացումից հետո Ֆինանսական կառավարման և հաշվառման վարչությունում կանոնադրական գործառույթների կանոնակարգման, 2026 թվականի ընթացքում նախատեսված Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարիների ընտրությունների կազմակերպման և անցկացման ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ գործառույթների՝ ֆինանսական հատվածի գործընթացների ծավալների ավելացման իրականացմամբ:

Փորձագետ ներգրավելու ժամկետն է՝ մինչև 1(մեկ) տարի:

Փորձագետի պարտականությունները՝

- իրականացնել գործող ծրագրերով միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և ծրագրային բյուջետավորման հայտերը հիմնավորող փաստաթղթերի կազմման, հաստատման և ներկայացման աշխատանքները, հայտերի հիման վրա բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման, ֆինանսական գործի պլանավորման աշխատանքները՝ հաջորդ երեք տարիների համար.
- իրականացնել բյուջեի կատարման գործընթացը, այդ նպատակով եռամսյակային համամասնությունների ծրագրավորման, նախատեսված հատկացումների ծրագրային, միջծրագրային, միջեռամսյակային և միջհոդվածային վերաբաշխման աշխատանքները.
- իրականացնել բյուջետային ծախսերի տարեկան նախահաշիվների փոփոխությունները, ֆինանսական պարտավորությունների վճարումների, հաշվապահական հաշվառման վարման, Հանձնաժողովի հաստիքացուցակում, աշխատավարձերի և դրան հավասարեցված վճարումների փաստաթղթերի՝ «Հայկական ծրագրեր» համակարգ մուտքագրման աշխատանքները.
- իրականացնել վարկային քարտային հաշիվներով շրջանառվող միջոցների գրանցման, հաշվարկման աշխատանքները.
- իրականացնել «ՀՀ ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպում» ծրագրի դասախոսական կազմի գործուղումների և վարձատրության հաշվարկման, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման և ֆինանսական պարտավորությունների վճարման գործընթացը.
- իրականացնել Հանձնաժողովի օտարերկրյա, ներպետական գործուղումների և ծախսերի հաշվարկման և վճարման գործընթացը.

- Ազգային ժողովի ընտրությունների անցկացման ժամանակահատվածում իրականացնել Հայաստանի Հանրապետության թվով 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (այսուհետ՝ ԸԸՀ) կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվություն-ների ստացման, ստուգման, ամփոփման և ներկայացման աշխատանքները, ԸԸՀ-ների, տեղամասային ընտրական հանձնաժողովների ծախսերի, ընտրական հանձնաժողովների անդամների, տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների աշխատա-վարձերի վճարումները բանկային համակարգով իրականացնելու գործընթացը.
- Տեղական ինքնակառավարման ընտրությունների անցկացման ժամանակահատվածում իրականացնել Հայաստանի Հանրապետության թվով 38 ԸԸՀ-ների կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների ստացման, ստուգման, ամփոփման և ներկայացման աշխատանքները, ԸԸՀ-ների, տեղամասային ընտրական հանձնաժողովների ծախսերի, ընտրական հանձնաժողովների անդամների, տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների աշխատավարձերի վճարումները բանկային համակարգով իրականացնելու գործընթացը.
- իրականացնել ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, թեկնածուների ընտրական գրավի փաստաթղթերի ստուգման, ամփոփման, ձևակերպման, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ վերադարձվելու աշխատանքները.
- տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների նշանակման դեպքում, իրականացնել ՀՀ Կառավարության որոշման նախագծի փաթեթի, դրա հիմնավորումների, նախահաշվի՝ լիազոր մարմին ներկայացնելու նախապատրաստական աշխատանքները.
- իրականացնել համապատասխան լիազոր մարմնին ներկայացվող ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների (ծախսերի նախահաշիվների կատարման հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական, ոչ ֆինանսական և այլ հաշվետվությունների) կազմման և համապատասխան կայքերի միջոցով ներկայացման գործընթացները.
- իրականացնել Հանձնաժողովի հաշվեկշռում հաշվառված գույքի հաշվառման, հիմնական միջոցների գույքագրման, համապատասխան հաշվետվությունների կազմման, ներկայացման աշխատանքները՝ համապատասխան համակարգի միջոցով.
- իրականացնել Հանձնաժողովի պաշտոնական այցելությունների, Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ ներկայացուցչական, արարողակարգային և այլ միջոցառումների նախապատրաստման ու կազմակերպման ներկայացուցչական, նյութատեխնիկական և տրանսպորտային ծախսերի ապահովումը, Հանձնաժողովի օտարերկրյա և ներպետական գործուղումների ծախսերի վերաբերյալ ներկայացվող գրություն-հիմնավորումների, հաշվետվությունների լիազոր մարմին ներկայացնելու գործընթացը.
- Բարեխղճորեն կատարել պայմանագրով ստանձնած աշխատանքները, պահպանել Հանձնաժողովի ներքին կարգապահական կանոնները, իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները:

Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.
- հայերենի իմացություն.
- տնտեսագիտություն կամ հաշվապահական հաշվառում և հարկում կամ ֆինանսներ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն.
- հանրային հատվածի հաշվապահության ոլորտին վերաբերող օրենսդրության իմացություն.
- իրավական ակտերի մշակման կարողություններ և հմտություններ.
- հաշվետվությունների մշակման ունակություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ **2026թ. հունվարի 23-ը ներառյալ:**

Աշխատանքի վայրը, հեռախոսահամար՝ՀՀ, ք. Երևան, Գ.Քոչար 21ա, հեռախոս՝ 010-54-52-47:

Դիմողի կողմից ներկայացվող փաստաթղթերի անհրաժեշտ ցանկ՝

- դիմում՝ (ձևը կցվում է).
- հայտարարություն (ձևը կցվում է) ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին.
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), վկայականի(ների) պատճենները՝ բնօրինակներով, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից) կամ աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի հաստատված պատճենները.
- հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտություն կամ հաշվապահական հաշվառում և հարկում կամ ֆինանսներ բնագավառներում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր՝ զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը կամ համապատասխան տեղեկանք.
- ինքնակենսագրական.
- մեկ լուսանկար՝ 3 x 4սմ չափսի.
- անձնագրի և/կամ նույնականացման քարտի պատճենները (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի պատճենը):

Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված

անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Փաստաթղթերի ընդունման կարգը՝

Դիմողը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, տեղում փաստաթղթերի պատճենները համեմատվում են բնօրինակների հետ և բնօրինակները վերադարձվում են քաղաքացուն, կամ էլեկտրոնային տարբերակով՝ հետևյալ էլ. փոստին՝ balayang@elections.am:

Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն և հարցազրույց:

Ընտրված փորձագետի վերաբերյալ տեղեկությունը հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում (https://www.elections.am/):

Դիմումները ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 10^{00}-12^{00}-ը և 14^{30}-17^{00}-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անձնակազմի կառավարման բաժին՝ հեռ. 010-54-52-47/: